ԱՊԱՑՈՒՑՑՆԵՐԸ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ: ԱՊԱՑՈՒՑՑՆԵՐԻ ՀԵՏԱԶՈՏՈՒՄԸ ԵՎ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ: ՆԱԽԱԴԱՏԵԼԻ ՓԱՍՏԵՐԸ:

ՀՀ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 53-ՐԴ ՀՈԴՎԱԾ

դատարանը բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության վրա հիմնված ներքին համոզման հանգելու համար պարտավոր է յուրաքանչյուր ապացույց հետազոտել

- գործին դրա վերաբերելիության,
- օրենքով նման ապացույցի թույլատրելիության, արժանահավատության տեսանկյունից:

ԱՊԱՑՈՒՅՑՆԵՐԸ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 149[8]-րդ հոդվածի 2-րդ կետի 5-րդ ենթակետի համաձայն՝ դատարանը նախնական դատական նիստում (...) սահմանում է ապացույցներ ներկայացնելու ժամկետները:

Նշված իրավանորմից հետևում է, որ ապացուցման պարտականության բաշխմանը հաջորդում է ապացույցների ներկայացումը:

ՓԱՍՏԱԹՂԹԻ ԲՆՕՐԻՆԱԿԸ՝ ՈՐՊԵՍ ԳՐԱՎՈՐ ԱՊԱՑՈՒՅՑ, ԴԱՏԱՐԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՊԱՐՏԱԴԻՐ ՀԻՄՔԵՐԸ

Ընդհանուր կանոնի համաձայն՝ գրավոր ապացույցները դատարան կարող են ներկայացվել կամ բնօրինակով, կամ պատշաճ վավերացված պատճենի ձևով: Միևնույն ժամանակ օրենսդիրը վերոնշյալ ընդհանուր կանոնից սահմանել է հետևյալ բացառությունները՝

ա) փաստաթղթերի բնօրինակները պետք է ներկայացվեն բոլոր այն դեպքերում, երբ գործի հանգամանքները, օրենքներին կամ այլ իրավական ակտերին համապատասխան, կարող են հաստատվել միայն նման փաստաթղթերով;

բ) անհրաժեշտության դեպքում դատարանը կարող է պահանջել ներկայացնելու փաստաթղթերի բնօրինակները: Նման անհրաժեշտություն կարող է, մասնավորապես առաջանալ, երբ գործով ներկայացված միևնույն փաստաթղթի պատճենները տարբերվում են իրենց բովանդակությամբ, և դատարանը չի կարող պարզել գրավոր ապացույցի իրական բովանդակությունն առանց դրա բնօրինակը հետազոտելու: Այդպիսի անհրաժեշտություն կարող է ծագել նաև պատճենի անորակության, դրա իսկության մեջ համոզվելու անհրաժեշտության և այլ դեպքերում:

ՓԱՍՏԱԹՂԹԻ ԲՆՕՐԻՆԱԿԸ՝ ՈՐՊԵՍ ԳՐԱՎՈՐ ԱՊԱՑՈՒՅՑ, ԴԱՏԱՐԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՊԱՐՏԱԴԻՐ ՀԻՄՔԵՐԻ ՕՐԻՆԱԿՆԵՐ

- Պարտապանը վկայակոչել է պարտավորության կատարման հիմքով ստացականի ոչնչացված լինելը:
- Պարտքի գումարից պարբերաբար վճարումներ կատարելու փաստի վկայակոչումը, որոնց մասին գրառումներ են արվել <<Պարտավորագիր>> վերնագրով փաստաթղթի բնօրինակում, մինչդեռ հայցվորը Դատարան է ներկայացրել միայն բնօրինակի դիմերեսի պատճենը:

Պատասխանողն, ըստ էության վիճարկել է պարտավորության առկայությունը, որի ապացուցման պարտականությունը կրում է հայցվորը:

Դատարանների պարտավորությունը ապացուցման գործընթացը կազմակերպել և ապացուցման բեռը բաշխել՝ հավասարակշռելով կողմերի շահերը և ապացուցման գործընթացին մասնակցելու իրական հնարավորությունները:

ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

- փորձագիտական հավանական և կատեգորիկ եզրակացությունների գնահատումը
- դատարանի կողմից հատուկ գիտելիքներ պահանջող հարցերի վերաբերյալ եզրահանգումներ կատարելու անթույլատրելիությունը

ՔՆՆԱՐԿՈՒՄ

Դատարանի գործողություններն այն դեպքում, երբ գործում առկա է երկու փորձագիտական եզրակացություն՝

1-ինի համաձայն՝ ավտոմեքենայի վարորդը «Ֆորդ Տրանզիտ» մակնիշի ավտոմեքենայի հետ ընդհարումը կանխելու տեխնիկական հնարավորություն չի ունեցել, և նրա կողմից այնպիսի գործողություններ, ինչպիսիք տեխնիկական տեսակետից հակասեին ՃԵԿ-ի պահանջներին և պայմանավորած լինեին տվյալ ընդհարման առաջացումը, չեն դիտվում:

2-րդի համաձայն՝ ավտոմեքենայի վարորդը, երթևեկելով 56կմ/ժ-ից բարձր արագությամբ, թույլ է տվել գործողություններ, որոնք հակասում են ՃԵԿ-ի կանոնների 68-րդ կետի պահանջներին և «Գազ-31105» մակնիշի ավտոմեքենայի վարորդը կունենար տեխնիկական հնարավորություն կանխելու «Ֆորդ Տրանզիտ» մակնիշի ավտոմեքենայի հետ ընդհարումը, եթե ավտոմեքենան ընթանար թույլատրելի արագությամբ:

ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

- Լրացուցիչ (օրինակ՝ ելակետային տվյալների չտրամադրման դեպքում) և կրկնակի փորձաքննության (օրինակ՝ առկա են հակասություններ մի քանի փորձագետների եզրակացություններում) նշանակման հիմքերը:
- փորձագետին անհրաժեշտ տվյալները դատավարության մասնակիցների տիրապետման ներքո գտնվելու դեպքում դրանց չտրամադրման հետևանքները ապացուցման պարտականության տեսակետից:
- Կողմի նախաձեռնությամբ անցկացված փորձաքննության գնահատումը

ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՍԵՓԱԿԱՆ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅԱՄԲ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ ՆՇԱՆԱԿԵԼԸ

<<Հայեցողություն>> - նպատակահարմարության և օրինականության ողջամիտ հարաբերակցություն:

Թույլատրելի իրավաչափ վարքագծի ընտրություն՝ մարդու իրավունքների պաշտպանության անհրաժեշտությամբ պայմանավորված:

ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՍԵՓԱԿԱՆ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅԱՄԲ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ ՆՇԱՆԱԿԵԼԸ

- Գործի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության վրա հիմնված ներքին համոզման հանգելու պարտականության լիարժեք իրականացումը.
- Կողմերի մրցակցության և իրավահավասարության դատավարական սկզբունքները
- Իրավահարաբերության բնույթը և գործի փաստական հանգամանքները:

  (ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 197-րդ, 200-րդ հոդվածներ՝ ընդհանուր գույքից բաժնեմասի առանձնացման հնարավորություն)

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ ՆԱԽԱԳԻԾ

- 1. Գործին մասնակցող անձի ներկայացրած փորձագետի եզրակացությունն իր ապացուցողական նշանակությամբ հավասարազոր է առաջին ատյանի դատարանի որոշմամբ նշանակված փորձաքննության արդյունքում ստացված փորձագետի եզրակացությանը, եթե այն կատարած փորձագետը **մինչև նախնական դատական նիստի ավարտը դատարանի առջև գրավոր հաստատում է այն՝ նախազգուշացվելով ակնհայտ կեղծ եզրակացություն տալու համար քրեական պատասխանատվության մասին:**
- 2. Առաջին ատյանի դատարանը փորձագետից ատորագրություն է վերցնում նախազգուշացման մասին, որը կցվում է դատական նիստի արձանագրությանը:
- 3. Գործին մասնակցող անձի ներկայացրած փորձագետի եզրակացությունը պետք է համապատասխանի սույն օրենսգրքի 71-րդ հոդվածի պահանջներին:
- 4. Գործին մասնակցող անձի ներկայացրած փորձագետի եզրակացությանը կցվում է այն տված փորձագետի որակավորումը և մասնագիտական գիտելիքները հավաստող փաստաթուղթ:

ԱՊԱՑՈՒՅՑՆԵՐԻ ՀԵՏԱԶՈՏՈՒՄԸ ԵՒ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ:

Ապացույցների վերաբերելիությունը՝

- Վերաբերելի է այն ապացույցը, որն ավելի կամ պակաս հավանական է դարձնում գործը լուծելու համար նշանակություն ունեցող որևէ փաստի գոյությունը, քան այն կլիներ առանց այդ ապացույցի:

Ապացույցների թույլատրելիությունը՝

Ապացույցի դատավարական ձևի համապատասխանությունն օրենքի պահանջներին՝ **աղբյուրի, ստացման եղանակի, պայմանների, ինչպես նաև ապացույցի ձևակերպման տեսանկյունից:**

Ապացույցների արժանահավատությունն՝

- ապացույցի հատկանիշ է, որը բնութագրում է **ապացուցման առարկան կազմող հանգամանքների հավաստիությունն ու հստակությունը:** Արժանահավատ է այն ապացույցը, որը գործի լուծման համար նշանություն ունեցող հանգամանքների վերաբերյալ հավաստի տեղեկություն է բովանդակում (օրինակ՝ Հետաքննության ընթացքում տրված բացատրության և նախաքննության ընթացքում տրված ցուցմունքի գնահատումը, գրավոր ապացույցի համապատասխանությունը տվյալ տեսակի փաստաթղթերին ներկայացվող պահանջներին (կազմման, բովանդակության առումով) կանխորոշում է այդ ապացույցի արժանահավատությունը, վկաների ցուցմունքները գնահատելիս դատարանները պետք է հաշվի առնեն նրանցից յուրաքանչյուրի փոխհարաբերությունները գործին մասնակցող անձանց հետ):

ՔՆՆԱՐԿՈՒՄ

Ա-ի՝ Վաճառող և Բ-ի՝ Գնորդ (ով հանդես է եկել որպես Գ-ի ներկայացուցիչ) միջև կնքվել է նախավճարի պայմանագիր: Պայմանագրի համաձայն՝ վաճառողը պարտավորվել է օրինականացնել առուվաճառքի առարկա գույքի վրա գտնվող օրինական կառույցը, ստանալ նոր հասցե, սեփականաշնորհել և ստանալ սեփականության իրավունքի վկայական: Պայմանագրում նաև նշվել է, որ անշարժ գույքի վաճառքի արժեքը կազմել է 10 000 000 ՀՀ դրամ, որից 7 000 000 ՀՀ դրամն արդեն իսկ գնորդի կողմից վճարվել է վաճառողին:

Միաժամանակ, ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության կողմից նախապատրաստված նյութերն անհետևանք թողնելու մասին եզրակացության համաձայն՝ Բ-ն բացատրություն է տվել այն մասին, որ Գ-ն իրականում փոխանցել է 6 000 000 ՀՀ դրամ: Միաժամանակ, Բ-ն նաև նույնաբովանդակ գրություն է կազմել:

ՆԱԽԱԴԱՏԵԼԻ ՓԱՍՏԵՐԸ:

- նախկինում բնված բաղաբացիական և վարչական գործով օրինական ուժի մեջ մտած դատարանի վճռով հաստատված հանգամանքները **<u>նույն անձանց միջև</u>** այլ գործ բնելիս կրկին չեն ապացուցվում (գործին մասնակցող անձանց շրջանակի ամբողջական համընկնում):
- Քրեական գործով օրինական ուժի մեջ մտած **դատավճիռը** պարտադիր է դատարանի համար միայն այն փաստերով, ըստ որոնց հաստատված են **որոշակի գործողություններ և դրանք կատարած անձինք:**

ՔՆՆԱՐԿՈՒՄ

- Դատարանի օրինական ուժի մեջ մտած վճռով բավարարվել է 11.000 ԱՄՆ դոլար փոխառության գումարը բռնագանձելու պահանջի վերաբերյալ հայցը: Նշված վճռով ի թիվս այլ փաստերի հաստատվել է այն փաստը, որ իրականում գումարը փոխառությամբ տրվել է ամսական 5 տոկոս հավելավճարով վերադարձնելու պայմանով, սակայն այդ մասին գրավոր կարգով չի հիշատակվել: Պայմանագիրը վավերացվել է նոտարի կողմից:
- Ներկայումս նույն կողմերի միջև բննվում է գործ 11 000 ԱՄՆ դոլար փոխառության գումարի նկատմամբ հաշվարկված 5 տոկոս հավելավճարները բռնագանձելու պահանջի մասին:

ՆԱԽԱԴԱՏԵԼԻՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏԻՎ ԵՒ ՍՈՒԲՅԵԿՏԻՎ ՍԱՀՄԱՆՆԵՐ

Օբյեկտիվ սահմանների որոշման համար էական նշանակություն ունի հետևյալ երկու դատավարական կանոնների պահպանումը՝

- 1) վեճի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքների առկայությունը կամ բացակայությունը դատարանը պարզում է միայն օրենքով նախատեսված կարգով ձեռք բերված և հետազոտված ապացույցների միջոցով (բացառություն են կազմում միայն ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 52-րդ հոդվածով նախատեսված դեպքերը).
- 2) դատարանը պարզում է միայն գործին մասնակցող անձանց պահանջները և առարկությունները հիմնավորող, ինչպես նաև վեճի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքների առկայությունը կամ բացակայությունը (վեճի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքներ): Այս կանոնը կիրառելիս դատարանը պարտավոր է առաջնորդվել հայցվորի կողմից կանխորոշված հայցի առարկայի և հիմքի սահմաններով, որի փոփոխման բացառիկ իրավունքը պատկանում է հայցվորին (ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 32-րդ հոդված):

Նախադատելիության սուբյեկտիվ սահմաններն՝

- Օրինական ուժի մեջ մտած դատական ակտով հաստատված հանգամանքները նոր կայացվող դատական ակտ կարող են ներմուծվել միայն, եթե օրինական ուժի մեջ մտած դատական ակտով և նոր կայացվող դատական ակտով **գործին մասնակցող անձինք նույնն են (այդ թվում մասնակիցների իրավահաջորդության դեպքում):**

Օրինակ՝ օրինական ուժի մեջ մտած դատական ակտով քննվել է քաղաքացիական գործն ըստ Ա-ի և Բ-ի հայցի ընդդեմ Գ-ի, Դ-ի և Ե-ի:

Քննվում է քաղաքացիական գործն ըստ հայցի Գ-ի ընդդեմ Բ-ի և Կ-ի:

Քաղաքացիական գործով քննվում է Ա-ի հայցն ընդդեմ Բ-ի Գ-ի, Դ-ի՝ առուվաճառքի պայմանագիրը որպես շինծու գործարք անվավեր ճանաչելու պահանջի մասին և ըստ հակընդդեմ հայցի Դ-ի Ա-ին, երրորդ անձին՝ Ե-ին և Զ-ին վտարելու պահանջի մասին:

Օրինական ուժի մեջ մտած վճռով քննվել է Ա-ի իրավահաջորդի հայցն ընդդեմ Բ-ի, Գ-ի և Դ-ի՝ առուվաճառքի պայմանագրից բխող պարտավորագրի՝ վճարումը 12 ամսվա ընթացքում կատարելու մասին չկատարելու հիմքով անվավեր ճանաչելու պահանջի մասին:

ԱՊԱՑՈՒՑՄԱՆ ԿԱՐԻՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՓԱՍՏԵՐ

Գործին մասնակցող անձի կողմից այն փաստն ընդունելը, որի միջոցով մյուս անձը հիմնավորում է իր պահանջները կամ առարկությունները:

- Դատարանը չի ընդունում գործին մասնակցող անձի կողմից փաստի ընդունումը՝
- այդ փաստը ներառված չէ գործի լուծման համար նշանակություն ունեցող փաստերի շրջանակում.
- **առկա են ողջամիտ կասկածներ, որ գործին մասնակցող մյուս անձինք այն ընդունել են խաբեության, բռնության, սպառնալիքի, մոլորության ազդեցության տակ, մեկ կողմի ներկայացուցչի հետ մյուս կողմի չարամիտ համաձայնության հետևանքով կամ ճշմարտությունը թաքցնելու նպատակով.**
- այդ փաստը կարող է հաստատվել միայն օրենքով, այլ իրավական ակտով կամ պայմանագրով սահմանված որոշակի ապացույցով.
- այդ փաստի հաստատումն անխուսափելիորեն ազդում է գործին չմասնակցող անձի՝ գործին մասնակցող անձանցից որևէ մեկի նկատմամբ ունեցած իրավունքների կամ պարտականությունների վրա:

ՄԻՋՆՈՐԴՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Անձի միջնորդություն հարուցելու իրավունքին համապատասխանում է տվյալ հարցով որոշում կայացնելու դատարանի պարտականությունը:

ՔՆՆԱՐԿՈՒՄ

Պատասխանող կողմը միջնորդում է դատարանին որպես վկա ներգրավել նոտարական վավերացում ստացած փոխառության պայմանագրի տակ ստորագրած վկային և թարգմանչին՝ վիճարկելով գործարքը իր կողմից ստորագրած լինելու փաստը (գործում նաև առկա է փորձագիտական եզրակացություն, որով այդ ստորագրությունը պատասխանողի կողմից կատարվելու փաստը հնարավոր չէր հաստատել): Դատարանը մերժել է նշված միջնորդությունը, այն պատճառաբանությամբ, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 298-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ գործարքի հաԱարակ գրավոր ձևը չպահպանելը վեճի դեպքում կողմերին զրկում է ի հաԱտատումն գործարքի ու նրա պայմանների՝ վկաների ցուցմունքներ վկայակոչելու, Ասկայն նրանց չի զրկում գրավոր և այլ ապացույցներ ներկայացնելու իրավունքից: Արդյոք դատարանի որոշումը իրավաչափ է:

ՔՆՆԱՐԿՈՒՄ

- Ներկայացվել է որպես շինծու գործարք բնակարանի առուվաճառքի և գրավի պայմանագիրն առոչինչ ճանաչելու և գործարքի անվավերության հետևանքներ կիրառելու պահանջ: Գործի փաստերի համաձայն Բանկը վարկավորման պայմանագրով Ա-ին տրամադրել է 18 000 ԱՄՆ դոլար վարկ: Բ-ն ի հիմնավորում ներկայացված հայցի ներկայացրել է թվով 20 անդորրագիր, որոնք վրա բացակայում են վճարումները կատարած անձի ստորագրությունը: Բ-ն միջնորդել է Բանկից պահանջել բանկային գործը և մասնավորապես անդորրագրերի այն օրինակները, որոնց վրա առկա են վճարումները կատարած անձանց ստորագրությունները (Բանկի կողմից այդ ապացույցները պահանջելու Բ-ի դիմումը մերժվել էր բանկային գաղտնիք հանդիսանալու հիմքով): Այդպիսով, Բ-ն, ըստ էության վիճարկել է վարկի գումարը և տոկոսներն իր կողմից վճարված լինելու հանգամանքը: Դատարանը, բավարարել է միջնորդությունը , սակայն ընկերության կողմից ներկայացված բանկային գործում բացակայում էին վճարումները կատարելու անդորրագրերը:Դատարանը մերժել է հայցապահանջը:

ՔՆՆԱՐԿՈՒՄ

- Արդյոք հայցը բավարարվելու դեպքում գործի քննության ավարտից հետո ներկայացված հայցի ապահովման միջոցը վերացնելու մասին միջնորդությունը ենթակա է դատարանի քննությանը.

ԻՆՔՆԱԲԱՑԱՐԿ

Արդյո՞ք նույն անձանց միջև ընկած մեկ այլ բաղաքացիական գործով որպես դատավոր հանդես գալու հանգամանքն ինքնին բավարար հիմք է ինքնաբացարկի միջնորդությունը բավարարելու համար:

դատարանի կամ դատավորի անաչառության կանխավարկածն

ՔՆՆԱՐԿՈՒՄ

- Դատարանը ֆննել է երեխայի խնամքը ծնողներից մեկին հանձնելու պահանջ: Գործով ապահովվել է խնամակալության և հոգաբարձության մարմնի պարտադիր մասնակցությունը: Մարմնի ներկայացուցիչը հանդիսացել է գործը ֆննող դատավորի որդին: Արդյոք դատավորը պարտավոր էր բավարարել ինֆնաբացարկի միջնորդությունը:
- Դատավարության կողմերից մեկը դսևորել է անհարգալից վերաբերմունք դատարանի նկատմամբ: Դատավորը հայտարարել է նախազգուշացում: Կողմը ներկայացրել է ինֆնաբացարկի միջնորդություն այդ փաստի հիմքով: Արդյոք կողմի՝ իր անաչառության վերաբերյալ կասկածները փարատելու համար դատավորը պետք է հայտի ինֆնաբացարկ:

ԴԱՏԱԿԱՆ ԾԱՆՈՒՑՈՒՄՆԵՐԸ ԵՒ ԱՐԴԱՐ ԴԱՏԱՔՆՆՈՒԹՑԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ։

- արդյոք դատարանը նախնական դատական նիստի ավարտից անմիջապես հետո կարող է անցնել գործի դատաքննությանը այն պարագայում, երբ կողմերից մեկը ներկա չէ և չի իրազեկվել գործը դատաքննության նշանակելու մասին որոշման մասին

ՊԱՏՇԱՃ ԾԱՆՈՒՑՄԱՆ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ

- նույն հասցեում բնակվող համապատասխանողների ծանուցումը:
- դատական նիստը ծանուցագրում նշված ժամից ուշ սկսելը
- գործում առկա այլ հասցեով պատասխանողին ծանուցելու դատարանի պարտականությունը
- գործի քննության ընթացքում հասցեն փոխելու մասին գործին մասնակցող անձանց դատարանին տեղեկացնելու պարտականությունը և դատարանի նոր հասցեով կողմին ծանուցելու պարտականությունը
- հոգեկան խանգարում ունեցող անձանց իրավական պաշտպանության իրավունքները՝ դատարանում լսվելու իրավունքը, դատական քննությանը լիարժեք մասնակցության իրավունքը և դատական ակտի բողոքարկման իրավունքը

Դատավարական իրավունքների կարևորությունը կարող է տարբեր լինել՝ կախված այն գործողության նպատակից, որն անձը ցանկանում է իրացնել:

- Դատարանում լսվելու իրավունքը
- Դատական քննությանը լիարժեք մասնակցության իրավունքը
- Դատական ակտի բողոքարկման իրավունքը:

ԴԱՏԱԿԱՆ ՆԻՍՏԵՐԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒՄ: ԴԱՏԱԿԱՆ ՆԻՍՏԵՐԻ ՊԱՐԶ ԹՂԹԱՅԻՆ ԵՒ ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒՄ՝ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Արդո՞ք քաղաքացիական գործում էլեկտրոնային կրիչի վրա մեկ կամ մի քանի դատական նիստերի ձայնային արձանագրումների բացակայությունը կարող է համարվել դատական նիստի արձանագրության բացակայություն, եթե քաղաքացիական գործում առկա են այդ նիստերի համակարգչային համառոտագրումները

ԳՈՐԾԻ ՎԱՐՈՒՑԹԻ ԿԱՍԵՑՈՒՄԸ ԵՒ ՎԵՐՍԿՍՈՒՄԸ

ՀՀ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 105-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ԿԵՏԻ ՀԱՄԱՁԱՅՆ՝ ԴԱՏԱՐԱՆԸ ՊԱՐՏԱՎՈՐ Է ԿԱՍԵՑՆԵԼ ԳՈՐԾԻ ՎԱՐՈՒՅԹԸ, ԵԹԵ ԱՆՀՆԱՐԻՆ Է ՏՎՅԱԼ ԳՈՐԾԻ ՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ ՄԻՆՉԵԻ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ, ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ, ՔՐԵԱԿԱՆ ԿԱՄ ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԿԱՐԳՈՎ ՔՆՆՎՈՂ ԱՅԼ ԳՈՐԾՈՎ ԿԱՄ ՀԱՐՑՈՎ ՈՐՈՇՈՒՄ ԿԱՅԱՑՆԵԼԸ:

- այն կապը, որն առկա է քննվող գործի և այլ դատարանում սահմանադրական, քաղաքացիական, քրեական կամ վարչական դատավարության կարգով քննվող գործի միջև
- այլ դատավարության կարգով քննվող այն իրավահարաբերությունները կամ փաստերը, որոնք քննվող գործի համար իրավաբանական նշանակություն ունեն,
- ինչու տվյալ իրավահարաբերությունը կամ փաստը չի կարող հաստատվել տվյալ գործի քննության շրջանակներում, այսինքն՝ ցույց տալ գործի քննության անհնարինությունը

ՔՆՆԱՐԿՈՒՄ

- Դիմելով դատարան՝ Ա-ն պահանջել է ձեռքբերման վաղեմության ուժով ճանաչել սեփականության իրավունքը ՀՀ Կոտայքի մարզի թիվ 9 հողատարածքի նկատմամբ: Նշված գործով որպես պատասխանող է ներգրավվել հողատարածքի սեփականության իրավունքի վկայականի համաձայն որպես սեփականատեր գրանցված՝ Գ-ն, իսկ որպես երրորդ անձ է ներգրավվել Գ-ի կինը՝ Բ-ն: Մեկ այլ քաղաքացիական գործով Բ-ն վիճարկում է վերոհիշյալ հողամասի և դրա վրա գտնվող շինության կեսի նկատմամբ սեփականության իրավունքը՝ որպես ամուսնության ընթացքում ձեռք բերված գույք: Արդյոք ձեռքբերման վաղեմության ուժով սեփականության իրավունքի ճանաչման պահանջով քաղաքացիական գործի վարույթը ենթակա է կասեցման:

ՔՆՆԱՐԿՈՒՄ

Դատարանում քննվում է Ա-ի հայցն ընդդեմ Բ-ի՝ բնակարանից վտարելու պահանջի մասին:

Մեկ այլ քաղաքացիական գործով քննվում է Բ-ի բնակարանի ձեռքբերման հիմք հանդիսացող գործարքների անվավերության հարցը:

Արդյոք գործի վարույթը ենթակա է կասեցման:

- Դիմելով դատարան՝ հայցվորը պահանջել է հակաօրինական ճանաչել գործատուի կողմից աշխատանքային պայմանագրի լուծումը, վերականգնել նախկին աշխատանքում և բռնագանձել հարկադիր պարապուրդի գումարը: Պատասխանողի ներկայացուցիչը դատական նիստի ընթացքում հայտնել է, որ հայցվորը մահացել է, ներկայացրել է մահվան վկայական և միջնորդել է գործի վարույթը կարճել:

- Դատարան ներկայացվել է գույքի նկատմամբ ձեռքբերման վաղեմության հիմքով սեփականության իրավունքը ճանաչելու պահանջ: Այդ գույքի մի մասը պատկանել է պատասխանողներից Ա-ին: Դատարանը հայցը բավարարել է, դատական ակտը Ա-ի կողմից մինչև այդ ակտի օրինական ուժի մեջ մտնելը չի բողոքարկվել Ա-ի կողմից: Դատական գործը վերաքննիչ վարույթում գտնվելու ընթացքում Ա-ն մահացել է: Արդյոք գործի վարույթը ենթակա է կասեցման:

ՀՀ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳԻՐՔ ՆԱԽԱԳԻԾ

- Դատարանն իրավունք ունի կասեցնել գործի վարույթը, եթե՝
- **1) նշանակվել է փորձաքննություն.**
- **2) գործին մասնակցող իրավաբանական անձը վերակազմակերպվում է**
- **<u>3) օրենքով սահմանված կարգով բողոքարկվել է գործով կայացված միջանկյալ կամ գործն ըստ էության չլուծող դատական ակտը:</u>**

ՀՀ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ ՆԱԽԱԳԻԾ ԳՈՐԾԻ ՎԱՐՈՒՅԹԸ ՎԵՐՍԿՍԵԼԸ

- 1.Գործի վարույթը վերսկսվում է դրա կասեցումն առաջացրած հանգամանքների վերանալու փաստը դատարանին հայտնի դառնալուց հետո եռօրյա ժամկետում:
- 2.Բացի սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված դեպքից, դատարանը վերսկսում է գործի վարույթը, եթե՝
- **1) գործի վարույթը որևէ հիմքով կասեցնելուց հետո ի հայտ է եկել գործի վարույթը կասեցնելու նոր հիմք՝ այդ հիմքը գործին մասնակցող անձանց հետ քննարկելու և գործի վարույթը կասեցնելու նպատակով.**
- **2) գործի վարույթը կասեցնելուց հետո ի հայտ է եկել գործի վարույթը կարճելու կամ հայցն առանց քննության թողնելու հիմք՝ այդ հիմքը գործին մասնակցող անձանց հետ քննարկելու և համապատասխանաբար գործի վարույթը կարճելու կամ հայցն առանց քննության թողնելու նպատակով:**

ԳՈՐԾԻ ՎԱՐՈՒՅԹԻ ԿԱՐՃՈՒՄԸ ԵՎ ԳՈՐԾԸ ԱՅԼ ԴԱՏԱՐԱՆԻ ՔՆՆՈՒԹՅԱՆԸ ՀԱՆՁՆԵԼԸ

Հանրային ծառայությունից բխող վեճերի

ընդդատությունը:

- իրավահարաբերության կողմերից մեկը հանրային իշխանական լիազորություններով օժտված սուբյեկտ
- իրավահարաբերության բովանդակությունը կազմում է հանրային իշխանական լիազորություններով օժտված սուբյեկտի կողմից իր հանրային իշխանական լիազորությունների իրականացման պարտականությունը:
- իրավահարաբերությունը ծագել է հանրային շահի իրացման կապակցությամբ (օրինակ՝ ժառանգության իրավունքի վկայագիրն անվավեր ճանաչելը, ժառանգության իրավունքի վկայագիր տրամադրելը մերժելը, ապրանքային նշանի գրանցումը այն չօգտագործելու հիմով չեղյալ ճանաչելը և այլն):

Դիմելով դատարան՝ Ա-ն և Բ-ն պահանջել են բռնագանձել Գ-ից 15 000 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամի 1/3 մասը՝ որպես ժառանգության հետ կապված ծախսերի հատուցում: Դիմելով դատարան՝ Գ-ն պահանջել է Երևանի թիվ 2 հասցեում գտնվող բնակարանից բնեղենով առանձնացնել իրեն պատկանող 1/3 մասը, դրա անհնարինության դեպքում գույքը հրապարակային սակարկություններով վաճառել և ստացված գումարը բաշխել ընդհանուր սեփականության մասնակիցների միջև՝ նրանց բաժիններին համաչափ: Նշված գործերը միացվել են մեկ վարույթում: Դատական նիստի ընթացքում Գ-ն հայտարարել է, որ ցանկանում է, որպեսզի ժառանգական ծախսերի հետ կապված ծախսերը դրվեն իրեն պատկանող ժառանգական գույքի վրա, այսինքն՝ հանվի ժառանգական գույքի արժեքից և որ այդ դեպքում, ինքը կհրաժարվի իրեն հասանելիք տարածքից: Դրան հաջորդել է Ա-ի և Բ-ի հայտարարություն, այն մասին, որ եթե ժառնագական գույքի 1/3 բաժնից Գ-ն հրաժարվում է, ապա գումարի պահանջի մասին այլևս խոսք չկա, քանի որ այդ բաժինը կվաճառվի, և այդ գումարները կվճարվեն: Դատարանը, հարցին այն մասին, թե արդյոք կողմերը հրաժարվում են իրենց ներկայացրած պահանջներից, Ա-ն և Բ-ն նշել են, որ եթե Գ-ն հրաժարվում է տարածքից, ապա այո, իսկ Գ-ն իր հերթին նշել է, որ հրաժարվում է իր կողմից ներկայացված հայցադիմումից: Դատարանը կարճել է գործի վարույթը: Ա-ի և Բ-ի կողմից ներկայացվել է վերաքննիչ բողոք: Գնահատեք Դատարանի որոշման իրավաչափությունը:

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ ՆԱԽԱԳԻԾ

Անկախ վերաքննիչ բողոքի հիմքերից և հիմնավորումներից՝ վերաքննիչ դատարանը ստուգում է՝

1) դատական ակտի անվերապահ բեկանման հիմքերի առկայությունը,

2) գործի վարույթը կարճելու հիմքերի առկայությունը,

ՆՈՐ ԵՎ ՆՈՐ ԵՐԵՎԱՆ ԵԿԱԾ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐ

Դատարանի կողմից կայացված վճիռը բողոքարկվել է վերաքննիչ դատարան: Վերաքննիչ դատարանը վերաքննիչ բողոքը մերժել է և դատական ակտը թողել է անփոփոխ: Վերաքննիչ դատարանի որոշումն իր հերթին բողոքարկվել է վճռաբեկ դատարան: Վճռաբեկ դատարանի կողմից վերադարձվել է վճռաբեկ բողոքը:

Արդյոք վերաքննիչ դատարանը պետք է վարույթ ընդունի վերաքննիչ դատարանի դատական ակտը նոր հանգամանքով վերանայելու բողոքը:

ՆՈՐ ԵՎ ՆՈՐ ԵՐԵՎԱՆ ԵԿԱԾ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐ

Դատարանի կողմից կայացվել է վճիռ, որի դեմ ներկայացվել է վերաքննիչ բողոք: Վերաքննիչ դատարանի որոշմամբ վերադարձվել է վճռի դեմ ներկայացված վերաքննիչ բողոքը բողոքարկման համար նախատեսված ժամկետի բացթողմամբ ներկայացված լինելու հիմքով:

Առաջին ատյանի, Վերաքննիչ, թե Վճռաբեկ դատարանի կողմից պետք է վարույթ ընդունվի դատական ակտը նոր հանգամանքով վերանայելու բողոքը:

ԴԱՏԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՀԵՏԱՁԳՎԱԾ ԲՈՂՈՔԱՐԿՈՒՄ

արդյոք մեկամսյա ժամկետը լրանալու և ժամկետի բացթողման պատճառը հարգելի համարելու և այդ ժամկետը վերականգնելու վերաբերյալ միջնորդություն չպարունակելու պատճառաբանությամբ վերաքննիչ բողոքը վերադարձվելուց հետո ներկայացված <<Վերաքննիչ բողոք բերելու համար օրենքով սահմանված ժամկետի բացթողման պատճառը հարգելի համարելու և այն վերականգնելու, վերաքննիչ բողոքը վարույթ ընդունելու մասին>> միջնորդության հիմքով իրավաչափ է վերաքննիչ վարույթի հարցումը և բողոքի քննությունը:

ՎԵՐԱՔՆՆԻՉ ԲՈՂՈՔԸ ՎԵՐԱԴԱՐՁՆԵԼՈՒ ՈՐՈՇՈՒՄԸ

- Դատարանի կողմից վճիռը հրապարակման կամ առնվազն հաջորդ օրը **գործին մասնակցող անձին** պատվիրված նամակով ուղարկելու պարտականությունը:

ՀՀ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 213-ՐԴ ՀՈԴՎԱԾ

- բաց թողնված ժամկետը վերականգնելու միջնորդություն ներկայացնելու հիմքով՝ վերաբերելի բողոքը վերադարձնելուց հետո թույլ տրված խախտումը շտկելու հնարավորություն

(ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին օրենքի նախագիծ)

ՎԱՐՈՒՅԹԸ ՎԵՐԱՔՆՆԻՉ ԴԱՏԱՐԱՆՈՒՄ

- ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 208-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ գույքային պահանջով քաղաքացիական գործերով վերաքննությունը թույլատրելի է միայն, եթե տվյալ գործով ***վեճի առարկայի արժեքը գերազանցում է նվազագույն աշխատավարձի հիսնապատիկը:***
- ***(ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 208-րդ հոդվածի 2-րդ մասը ճանաչել Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 18-րդ և 19-րդ հոդվածներին հակասող և անվավեր՝ այնքանով, որքանով չի նախատեսում բողոքարկման իրավունքի սահմանափակումից բացառություններ բոլոր այն դեպքերում, երբ առաջին ատյանի դատարանը թույլ է տվել արդար դատաքննության իրավունքի բուն էությունը խաթարող դատական սխալ, մասնավորապես, երբ չեն պահպանվել ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածի 1-ին մասով և Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին 1950թ. նոյեմբերի 4-ի կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված դատավարական երաշխիքները 18.06.12 ՍԴՈ-1037 որոշմամբ)***
- արդար դատաքննության իրավունքը, հանդիսանալով բացառապես պրոցեսուալ բնույթի իրավունք, ենթադրում է դատավարական նորմի խախտում:

ՎԵՐԱՔՆՆԻՉ ԲՈՂՈՔԻ ՀԻՄՔԵՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄՆԵՐԸ ՓՈՓՈԽԵԼԸ ԵՒ ԼՐԱՑՆԵԼԸ:

Դատարանի 01.03.2015 թվականի վճռի դեմ 29.04.2015 թվականին ներկայացվել է վերաքննիչ բողոք: Այնուհետև, 09.04.2015 թվականին ներկայացվել է վերաքննիչ բողոքի լրացում: Վերաքննիչ դատարանի կողմից 15.04.2015 թվականին վարույթ է ընդունվել և վերաքննիչ բողոքը և վերաքննիչ բողոքի լրացումը:

ՎԵՐԱՔՆՆԻՉ ԲՈՂՈՔ ԲԵՐՈՂ ԱՆՁԻ ԿՈՂՄԻՑ ՎԵՐԱՔՆՆԻՉ ԲՈՂՈՔՈՒՄ ՄԻ ՔԱՆԻ ՀԻՄՔԵՐ ԵՒ ՄԻ ՔԱՆԻ ՊԱՀԱՆՋՆԵՐ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ԴԵՊՔԵՐԸ

Վերաքննիչ դատարանը, կաշկանդված լինելով վերաքննիչ բողոքի հիմքերով և հիմնավորումներով, կաշկանդված չէ բողոքում ներկայացված պահանջով և իր լիազորություններից օգտվում է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով՝ ըստ դատական պաշտպանության իրավունքի իրականացման, դատավարական նպատակահարմարության և արդարադատության արդյունավետության:

Վերաքննիչ բողոքով ներկայացված պահանջը կարող է փոփոխվել բացառապես վերաքննության հարուցման փուլում, մինչև բողոքարկման ժամկետի լրանալը:

Դատական ակտի վերանայումը կոնկրետ պահանջի շրջանակներում իրականացնելու սահմանափակում գործող օրենսդրությամբ նախատեսված չէ:

ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱՏԱԿԱՆ ԱԿՏԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՒ ԿԱՏԱՐՄԱՆ ԹՈՒՅԼԱՏՐԵԼՈՒ ԿԱՄ ՃԱՆԱՉՈՒՄԸ ԵՒ ԿԱՏԱՐՈՒՄԸ ՄԵՐԺԵԼՈՒ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ ԲՈՂՈՔԱՐԿԵԼԸ

բողոքարկումն իրականացվում է գործն ըստ էության լուծող դատական ակտերի բողոքարկման կարգով:

Միջազգային կամ օտարերկրյա արբիտրաժային վճռը ճանաչելու վերաբերյալ դատական ակտի ճանաչումը:

ԱՆԳՈՐԾՈՒՆԱԿ ԱՆՁԻՆՔ

- դատավարական կարգավիճակը (դատարանում լսվելու իրավունքը, դատական քննության լիարժեք մասնակցության իրավունքը, դատական ակտի բողոքարկման իրավունքը)
- բողոքարկման իրավունքը
- պետական տուրքի վճարումից ազատված լինելը

(խտրականության արգելք՝ տարբերակված մոտեցում՝ օբյեկտիվ հիմքից և իրավաչափ նպատակից զուրկ տարբերակված մոտեցում)

Դատարական պաշտպանության իրավունքի սահմանափակումը չի համապատասխանի Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետին, եթե այն իրավաչափ նպատակ չի հետապնդում և եթե կիրառված միջոցներիև հետապնդվող նպատակի միջև չկա համաչափության ողջամիտ հարաբերակցություն:

ԴԱՏԱԿԱՆ ԾԱԽՍԵՐ

Փաստաբանի խելամիտ վարձատրության առանձին հայցվով բռնագանձման հետ կապված իրավական հարցեր՝

1. որպես վնաս,
2. որպես դատական ծախս:

ՓԱՍՏԱԲԱՆԻ ՎԱՐԶԱՏՐՈՒԹՅՈՒՆ

Փաստաբանի վարձատրության՝ որպես դատական ծախսի բաշխման համար անհրաժեշտ ապացույցները՝ փաստաբանի կատարած ծառայությունների համար կատարված կամ կատարվելիք վճարումները հավաստող ապացույց:

իրավաբանական ծառայություններ մատուցող ընկերություն լինելու հանգամանքը որպես փաստաբանի խելամիտ վարձատրության՝ որպես դատական ծախսի փոխհատուցման անհնարինություն:

ՓԱՍՏԱԲԱՆԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ԽԵԼԱՄՏՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

- փաստաբանի կատարած աշխատանքի ծավալը (ապացույցներ հավաքելու և ներկայացնելու անհրաժեշտությունն ու այդ գործողությունները փաստացի կատարելու հանգամանքը, գործի բնույթը մասնակցության աստիճանը),
- գործի բարդությունը (վիճելի իրավահարաբերության բնույթը, գործի բնության տևողությունը),
- նմանատիպ գործերով պրակտիկայում ընդունված փաստաբանական ծառայության մատուցման դիմաց վճարվող գումարի չափը (ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԴԱՏԱԿԱՆ ԾԱԽՍԵՐԻ ՀԱՏՈՒՑՄԱՆ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՓԱՍՏԱԲԱՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ՄԻՋԻՆ ԳՆԱՑՈՒՑԱԿ)
- դատական ակտով բռնագանձվող գումարի և պահանջվող փաստաբանական վճարի չափի հարաբերակցությունը:

ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔ

- Որոշակի առանձնահատկություն ունեցող պահանջներով պետական տուրքի գանձման կարգը (օրինակ՝ իրավաբանական նշանակություն ունեցող փաստի (փաստերի) հաստատումը, գույքային և ոչ գույքային պահանջ (ինչպես նաև այլընտրանքային պահանջներ), ալիմենտի բռնագանձման կամ ալիմենտի չափի ավելացման վերաբերյալ հայցադիմումներ և այլն),
- հայցագինը որոշելու կանոնները (օրինակ՝ անորոշ ժամկետով վճարվելիք գումարների դեպքում՝ ալիմենտ, մինչև մեկ տարի ժամկետով կատարվելիք վճարումների հայցերով, վճարումների չափը պակասեցնելու կամ ավելացնելու հայցերով, վճարումները, հանձնումները դադարեցնելու հայցերով)
- Պետական տուրի վճարումը հետաձգված լինելու դեպքում հայցագինը նվազեցնելը:
- Այլընտրանքային պահանջներ:

ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ ՊԱՀԱՆՋՆԵՐ

Գույքային և ոչ գույքային պահանջները միմյանցից էապես տարբերվելով իրենց բնույթով և բովանդակությամբ, չեն կարող գործնականում հարաբերակցվել որպես այլընտրանքային պահանջներ:Գույքային և ոչ գույքային պահանջները, որոնց հիմքում դրված են նյութական և ոչ նյութական կարիքների բավարարման, հետևաբար նաև բովանդակությամբ տարբեր խնդիրներ, չեն կարող միմյանց փոխարինել և հետևաբար, հանդես գալ որպես այլընտրանքային պահանջներ: Այլընտրանքային պահանջները կարող են ներկայացվել համասեռ խնդրի վերաբերյալ, որպես միմյանց փոխարինող պահանջներ:

ՔՆՆԱՐԿՈՒՄ

- Գույքային պահանջի գործերով դատարանի վճիռը միայն դատավարական իրավունքի խախտումների հիմքով բողոքարկումը:
- ածանցյալ պահանջներ

ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՎՃԱՐՈՒՄԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ԵՒ ՏԱՐԱԺԱՄԿԵՏԵԼՈՒ ՄԻՋՆՈՐԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՒ ԻՐԱՎԱԿԱՆ ՈՐՈՇԱԿԻՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՈՒՆՔԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ

- 1. հայցադիմումը դատարան ներկայացնելիս կցվե՞լ է սահմանված կարգով և չափով պետական տուրքի վճարումը հավաստող փաստաթուղթը.
- 2. այդպիսին կցված չլինելու դեպքում դատարանին ներկայացվե՞լ է պետական տուրքի վճարումը հետաձգելու կամ տարաժամկետելու կամ դրա չափը նվազեցնելու կամ պետական տուրքի վճարումից ազատելու մասին միջնորդություն.
- 3. հայցադիմումը վարույթ ընդունելիս դատարանն անդրադարձե՞լ է այդ միջնորդությանը.
- 4. ի՞նչ որոշում է կայացվել նշված միջնորդության վերաբերյալ.
- 5. գործի քննության ընթացքում փոփոխվե՞լ է հայցի հիմքը կամ առարկան, ավելացվե՞լ է հայցապահանջի չափը:

ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՎՃԱՐՈՒՄԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ԵՒ ՏԱՐԱԺԱՄԿԵՏԵԼՈՒ ՄԻՋՆՈՐԴՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- արդյո՞ք վճռի եզրափակիչ մասում հայցադիմումը դատարան ներկայացնելու համար պետական տուրքի գումարը գործին մասնակցող անձից բռնագանձելու հարցին չանդրադառնալու պարագայում այդ հարցը կարող է լուծվել վճռում վրիպակ ուղղելու միջոցով:

  դատական ծախսերի հարցը լուծված չլինելու դեպքում այդ հարցը բացառապես կարող է լուծվել լրացուցիչ վճիռ կայացնելու միջոցով:

- Ներկայացված միջնորդության սահմաններից դուրս գալու անթույլատրելիությունը (օրինակ՝ ներկայացվել է պետական տուրքի վճարումից ազատելու միջնորդություն, սակայն դատարանի կողմից որոշվել է հետաձգել պետական տուրքի վճարումը)

ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ԳԾՈՎ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ

- սուբյեկտիվ չափորոշիչ (դատարանի ներքին համոզմունքը),
- օբյեկտիվ չափորոշիչ (ապացույցների օբյեկտիվ, բազմակողմանի հետազոտություն):

Օրինակ՝ վիճելի իրավահարաբերության բնույթը (գույքային, ոչ գույքային), հայցի ապահովման միջոցների առկայությունը, հաշմանդամությունը, կենսաթոշակը որպես միակ եկամուտ, աշխատանք չունենալը և այլն:

- Գործող իրավակարգավորման պայմաններում պետական տուրքի գանձում իրականացվում է ոչ թե դատարանի ցանկացած գործողության, այլ այն գործողությունների համար, որոնց արդյունքում վերջնական դատական ակտի կայացմամբ քննարկվում և լուծվում է ներկայացված գույքային կամ ոչ գույքային պահանջը: Հետևաբար, այն դեպքում, երբ դատարան դիմած անձը հայցում է դատարանի որևէ գործողության իրականացում, որն անմիջականորեն պայմանավորված չէ ներկայացված գույքային կամ ոչ գույքային պահանջի լուծման հետ, այլ ուղղված է վարույթի կանոնավոր ընթացքն ապահովելուն, թեկուզև այդ գործողության հայցումն իրականացվում է բողոքարկման ընթացակարգի միջոցով, այնուամենայնիվ, պետական տուրքի գանձման օբյեկտը և հաշվարկման հիմքը, ըստ էության, բացակայում են, հետևաբար բացակայում է նաև պետական տուրքի վճարման պարտականությունը, օրինակ՝ միջանկյալ դատական ակտերի բողոքարկման պարագայում:

ԴԱՏԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՀԱՐԿԱԴԻՐ ԿԱՏԱՐՈՒՄ

- 1. արդյո՞ք ներպետական օրենսդրությամբ սահմանված է օտարերկրյա պետության արբիտրաժային տրիբունալի (միջազգային արբիտրաժի) կողմից կայացված դատական ակտը ճանաչման ներկայացնելու ժամկետ.
- 2. արդյո՞ք այն դեպքում, երբ կատարման է ներկայացվում օտարերկրյա պետության արբիտրաժային տրիբունալի (միջազգային արբիտրաժի) կողմից կայացված դատական ակտը ՀՀ իրավասու դատարանի կողմից ճանաչելու մասին որոշման հիման վրա տրված կատարողական թերթ, «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածով սահմանված՝ կատարողական թերթն առաջին անգամ հարկադիր կատարման ներակայացնելու մեկամյա ժամկետը պետք է հաշվարկել օտարերկրյա պետության արբիտրաժային տրիբունալի (միջազգային արբիտրաժի) դատական ակտն օրինական ուժի մեջ մտնելու, թե՞ այդ դատական ակտը Հայաստանի Հանրապետությունում ճանաչելու վերաբերյալ որոշման օրինական ուժի մեջ մտնելու պահից:

Օտարերկրյա պետության դատարանի դատական ակտը կամ միջազգային արբիտրաժի որոշումը **<u>ճանաչելու վերաբերյալ Հայաստանի Հանրապետության իրավասու դատարանի կայացրած որոշումը</u>** կատարվում է «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով (ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 247պրիմ 7-րդ հոդված):

Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով նախատեսված դեպքերում օտարերկրյա պետության արբիտրաժային տրիբունալի վճիռների և որոշումների կատարման վերաբերյալ կատարողական թերթը տալիս է Հայաստանի Հանրապետության այն դատարանը, որը Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով որոշում է կայացրել տվյալ օտարերկրյա պետության արբիտրաժային տրիբունալի վճիռը և որոշումը Հայաստանի Հանրապետությունում ճանաչելու վերաբերյալ (<<Դատական ակտերի հարկադիր կատարման մասին>> ՀՀ օրենք Հոդված 19, 4-րդ մաս):

ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ԹԵՐԹԸ ԿԱՏԱՐՄԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ԲԱՑ ԹՈՂՆՎԱԾ ԺԱՄԿԵՏԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄԸ

Քաղաքացի-**պահանջատիրոջ** կողմից կատարողական թերթը կատարման ներկայացնելու ժամկետը հարգելի ճանաչված պատճառներով բաց թողնելու դեպքում դատարանը կարող է այն վերականգնել (<<Դատական ակտերի հարկադիր կատարման մասին>> ՀՀ օրենք, Հոդված 24, մաս 1-ին):

- ՀՀ Սահմանադրություն՝ **Հոդված 42.1.** Մարդու և քաղաքացու հիմնական իրավունքները և ազատությունները տարածվում են նաև իրավաբանական անձանց վրա այնքանով, որքանով այդ իրավունքներն ու ազատություններն իրենց էությամբ կիրառելի են դրանց նկատմամբ:
- Պահանջատեր- **Կատարողական վարույթի կողմերն են՝ պահանջատերը և պարտապանը: Պահանջատերն** այն քաղաքացին կամ իրավաբանական անձն է, Հայաստանի Հանրապետությունը կամ համայնքը կամ օտարերկրյա պետությունը որի օգտին կամ ի շահ որի տրվել է կատարողական թերթը (<<Դատական ակտերի հարկադիր կատարման մասին>> ՀՀ օրենք, Հոդված 7):

Եթե ի կատար ածված վճիռը բեկանվել է և կայացվել է հայցը լրիվ կամ մասնակի մերժելու մասին նոր վճիռ, կամ գործի վարույթը կարճվել է, կամ հայցը թողնվել է առանց քննության, ապա դատարանը կայացնում է դատական ակտ՝ գույքը ***պարտապանին*** լրիվ կամ մասնակի վերադարձնելու մասին՝ նոր դատական ակտին համապատասխան (<<Դատական ակտերի հարկադիր կատարման մասին>> ՀՀ օրենք Հոդված 26, մաս 1-ին):

<<պարտապան>> եզրույթը մեկնաբանելիս պետք է հասկանալ ոչ միայն պարտավորաիրավական հարաբերությունների կողմերին, այլ նաև քաղաքացիաիրավական հարաբերության այն մասնակցին, որը վճռի առարկա գույքի նկատմամբ ունեցել է կոնկրետ իրավունքներ:

ՀՈԴՎԱԾ 38.ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՍԵՑՆԵԼՈՒ ՀԱՐԿԱԴԻՐ ԿԱՏԱՐՈՂԻ ԻՐԱՎՈՒՆՔԸ

ՀԱՐԿԱԴԻՐ ԿԱՏԱՐՈՂՆ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԻ ԿԱՍԵՑՆԵԼ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԸ, ԵԹԵ՝

- 5) պարտապանը կամ նրա գույքը հետախուզվում է:
- **Հոդված 39.Կատարողական վարույթի կասեցման և վերսկսման կարգը**
- 1. Կատարողական վարույթը կասեցնելու և վերսկսելու մասին հարկադիր կատարողը կայացնում է որոշում:
- 2. Կասեցված կատարողական վարույթը վերսկսվում է դրա կասեցումն առաջացրած հանգամանքները վերանալուց հետո՝ պահանջատիրոջ դիմումով կամ հարկադիր կատարողի նախաձեռնությամբ:
- **Հոդված 40.Պարտապանի և (կամ) նրա գույքի հետախուզում հայտարարելը**
- 1. Պարտապանի և (կամ) նրա գույքի գտնվելու վայրի մասին տեղեկություններ չլինելու դեպքում հարկադիրկատարողը որոշում է կայացնում պարտապանի և (կամ) նրա գույքի հետախուզում հայտարարելու մասին:
- **Հոդված 41.Կատարողական վարույթի ավարտը**
- 1. Հարկադիր կատարողն ավարտում է կատարողական վարույթը, եթե՝
- 1) պահանջատերը դիմում է ներկայացրել կատարողական թերթը վերադարձնելու մասին.
- 2) անհնարին է պարզել պարտապանի գտնվելու վայրը, իսկ հարկադիր կատարողի և (կամ) պահանջատիրոջ ձեռնարկած՝ օրենքով թույլատրելի բոլոր միջոցները եղել են ապարդյուն.
- 2.1) անհնարին է պարզել պարտապանի գույքի գտնվելու վայրը, իսկ հարկադիր կատարողի և (կամ) պահանջատիրոջ ձեռնարկած՝ օրենքով թույլատրելի բոլոր միջոցները եղել են ապարդյուն.

ՈՉ ԳՈՒՑՔԱՑԻՆ ԲՆՈՒՅԹԻ ՎԵՃԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ԹԵՐԹԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄԸ